ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2

ք. Երևան «21» օգոստոսի 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ս. Զատիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ Նոր Խարբերդ գյուղի 3, 4, 5, 6, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 փողոցների ջրագծերի վերակառուցման Աշխատանքների անվանումը աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց պահից և կատարման ժամկետը սահմանվում է 6 ամիս՝ համաձայն Նոր Խարբերդ գյուղի 3, 4, 5, 6, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 փողոցների ջրագծերի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (համապատասխան նախագծային

փաստաթղթերի): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծային փաստաթղթերում, որով պետք է առաջնորդվի կապալառուն:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.1.1 Կապալառուն ներկայացնում է կատարողական փաստաթղթերի փաթեթը, որը պետք է կազմված լինի տեխնիկական հսկողություն և հեղինակային հսկողություն իրականացնող անձանց մասնակցությամբ:

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի

4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահման¬ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 80 000 000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ, որից 13 333 333 (տասներեք միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	<<Գազկոմշին>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ՀՀ ք.Երևան,Նոր-Նորքի 9-րդ զ-ծ 20/53
ՖՆ վարչություն	հեռ.՝ 095000027
Հ/Հ 900011028314	էլ.փոստ gascomshin@gmail.com
ՀՎՀՀ 02555816	"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	Հ/Հ 11500905218000
պաշտոնակատար	ՀՎՀՀ 00843968
	Տնօրեն
Ս. ՋԱՏԻԿՅԱՆ	Մ. ՄԻՍԱԿՅԱՆ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«21» օգոստոսի 2019թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 2- Նոր Խարբերդ գյուղի 3, 4, 5, 6, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 փողոցների ջրագծերի վերակառուցում

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Նոր Խարբերդ գյուղի 3,4,5,6,13,14,15,16,17,18,19,20 փողոցների ջրագծերի վերակառուցում

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միա-վորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ
1	2	3	4	5	6
	Նախագծվող ջրագիծ - 1-13				
	Հողային և ե/բ աշխատանքներ				
1	Ասֆալտբետոնե ծածկույթի կտրում սղոցով	գծմ	600.0	0.40	242.49
2	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում հարվածահար մուրճով	մ³	12.00	4.11	49.32
3	Ասֆալտբետոնե ծածկույթի մշակում էքսկավատրով, բարձում ա/մ և տեղափոխելով 5 կմ մեք.=0.375+0,5x2.0տ/մ³	մ³	78.00	4.37	340.74
4	Խրամուղու մշակում էքսկավատրով III կարգի գրունտներում կողալիցքով	մ³	4449.00	0.56	2497.62
5	Խրամուղու մշակում ձեռքով III կարգի գրունտներում՝ կողալիցքով	մ³	581.0	2.18	1268.19
6	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատրով, բարձելով ա/մ և տեղափոխելով 5կմ կմ մեք.=0.210+0,5x1,9տ/մ³	մ³	1673.00	3.92	6552.46
7	Խրամուղու մշակում էքսկավատրով IV կարգի գրունտներում կողալիցքով	մ³	336.00	0.73	244.71
8	Խրամուղու մշակում ձեռքով IV կարգի գրունտներում՝ կողալիցքով	մ³	178.0	3.85	685.23
9	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով h=10սմ հաստությամբ	մ³	376.0	4.64	1745.32
10	Խրամուղու ետլիցք ավազով	մ³	1169.0	3.70	4324.43
11	Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով	մ3	5538.0	0.28	1554.06
12	Խճի նախաշերտ h=12սմ	մ2	405.0	1.26	509.68
13	Երկշերտ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում h=8սմ (խոշորահատիկ՝ h=4սմ, մանրահատիկ՝ h=4սմ)	մ2	405.0	7.23	2927.07
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0.00	0.00
1	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de250,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	1190.0	13.19	15692.01

2	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de160,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	428.0	6.84	2927.12
3	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de110,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	2122.0	3.40	7206.45
4	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de90,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	400.0	2.56	1022.03
5	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de75,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	1123.0	1.81	2037.60
6	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում խրամուղիներում de63,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	120.0	1.38	165.29
7	Պոլիէթիլենե անկյուն de250, α=900	հատ	1	51.39	51.39
8	Պոլիէթիլենե անկյուն de250, α=450	հատ	8	51.39	411.13
9	Պոլիէթիլենե անկյուն de110, α=900	հատ	2	5.64	11.28
10	Պոլիէթիլենե անցում de250-160	հատ	1	28.65	28.65
11	Պոլիէթիլենե անցում de160-110	հատ	1	11.18	11.18
12	Պոլիէթիլենե անցում de110-90	հատ	1	4.59	4.59
13	Պոլիէթիլենե անցում de90-75	հատ	1	4.12	4.12
14	(PE) (St) միացում՝ HC160/150	հատ	2	58.43	116.85
15	(PE) (St) միացում՝ HC110/100	հատ	2	35.21	70.42
16	(PE) (St) միացում՝ HC90/80	հատ	1	27.77	27.77
17	(PE) (St) միացում՝ HC63/50	հատ	2	18.23	36.46
18	Պոլիէթիլենե (PE)de110x6,6, PN=1.0 ՄՊա եռակցվող խողովակների միացում գոյություն ունեցող D110մմ պոլիէթիլենե խողովակներին	տեղ	4	2.16	8.64
19	Պոլիէթիլենե (PE)de75x4,5, PN=1.0 ՄՊա եռակցվող խողովակներիմիացում գոյություն ունեցող D75մմ պոլիէթիլենե խողովակներին	տեղ	2	2.16	4.32
20	Պոլիէթիլենե խցափակիչ de75	հատ	1	3.55	3.55
21	DN377x4 (St) պողպատե պատյան խողովակի տեղադրում	մ	15.0	27.72	415.82
22	Պողպատե խողովակի կտրում DN530x6	տեղ	4	9.61	38.44
23	DN530մմ պողպատե (St) խողովակների խցափակում մետաղական թիթեղով - 1տեղ	կգ	9.50	0.75	7.11
24	DN377x4 (St) պողպատե պատյան խողովակի և DN530x6 (St) էլ. եռակցվող խողովակների հակակոռոզիոն մեկուսացում	մ²	19.0	1.47	27.92
25	Պոլիէթիլենե (PE) de250-160 խողովակների լվացում,ախտահանում	կմ	1.618	144.05	233.07
26	Պոլիէթիլենե (PE) de110-90 խողովակների լվացում,ախտահանում	կմ	2.522	78.18	197.17
27	Պոլիէթիլենե (PE) de75-63 խողովակների լվացում,ախտահանում	կմ	1.243	65.43	81.33
	Փականային հոր - 15 հատ				
	Ե/բետոնե աշխատանքներ				
1	B7.5 բետոնի նախապատրաստական շերտի ստեղծում h=10սմ հաստությամբ	մ3	3.31	35.10	116.19
2	D=1.0մ տրամագծով ե/բ հորի հիմքի սալ ՀՍ-10 տիպի	հատ	13	38.17	496.20
3	Պատի օղակ ՊՕ-10-9	հատ	13	28.76	373.85
4	Պատի օղակ ՊՕ-10-6	հատ	13	19.61	254.90
5	D=1.5մ տրամագծով ե/բ հորի հիմքի սալ ՀՍ-15 տիպի	հատ	2	45.75	91.50
6	Պատի օղակ ՊՕ-15-9	հատ	2	58.82	117.64
7	Պատի օղակ ՊՕ-15-6	հատ	2	34.51	69.02
8	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում ԾՍ1-10 տիպի թուջե ծանր մտոցով	հատ	13	98.04	1274.48
9	Ե/բ հորերի ծածկի սալերի տեղադրում ԾՍ1-15 տիպի թուջե ծանր մտոցով	հատ	2	108.49	216.99
10	Մետաղական ելարան	տ	0.248	588.22	145.88

11	Ե/Բ հորերիի (D=1.0մ, H=1.8մ, 13 հատ,D=1.5մ, H=1.8մ, 2 հատ) պատերի շարվածքի իրականացում B15 դասի լեկալ աղյուսից	մ3	2.52	58.82	148.23
12	Հորերի պատերի սվաղ ցեմենտավազային շաղախով (Լեկալ աղյուսի շարվածքի վրա,դրսից և ներսից)	մ3	1.55	37.88	58.53
13	Ցեմենտ/ավազային շաղախ M100 մակնիշի	մ3	0.20	37.88	7.58
14	Ներդիր տարրեր	կգ	43.5	0.59	25.59
15	D=1.0մ H=1,5մ ե/բ հորի տեղադրում 13 հատ	մ³	11.70	40.16	469.86
16	D=1.5մ H=1,5մ ե/բ հորի տեղադրում 2 հատ	մ³	2.96	40.16	118.87
	Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	DN273x4,5 (St) պողպատե էլ. եռակցվող խողովակի տեղադրում	մ	1.0	22.33	22.33
2	Սեպավոր փականի մոնտաժում հորում DN250, PN=1,0ՄՊա	հատ	1	277.28	277.28
3	Սեպավոր փականի մոնտաժում հորում DN150, PN=1,0ՄՊա	հատ	3	100.14	300.41
4	Սեպավոր փականի մոնտաժում հորում DN100, PN=1,0ՄՊա	հատ	6	76.48	458.86
5	Սեպավոր փականի մոնտաժում հորում DN80, PN=1,0ՄՊա	հատ	2	48.37	96.74
6	Սեպավոր փականի մոնտաժում հորում DN65, PN=1,0ՄՊա	հատ	4	35.35	141.40
7	Պողպատե կցաշուրթ DN250(St), PN=1,0ՄՊա	հատ	1	15.83	15.83
8	Պողպատե միջադիրի տեղադրում հորում DN250(St), PN=1,0ՄՊա պողպատե ազատ կցաշուրթով	հատ	1	36.23	36.23
9	Պողպատե միջադիրի տեղադրում հորում DN160(St), PN=1,0ՄՊա պողպատե ազատ կցաշուրթով	հատ	6	15.21	91.25
10	Պողպատե միջադիրի տեղադրում հորում DN110(St), PN=1,0ՄՊա պողպատե ազատ կցաշուրթով	հատ	12	10.45	125.41
11	Պողպատե միջադիրի տեղադրում հորում DN90(St), PN=1,0ՄՊա պողպատե ազատ կցաշուրթով	հատ	4	9.30	37.20
12	Պողպատե միջադիրի տեղադրում հորում DN63(St), PN=1,0ՄՊա պողպատե ազատ կցաշուրթով	հատ	8	6.15	49.20
13	Պոլիէթիլենե եռաբաշխիչ de160	հատ	1	22.06	22.06
14	Պոլիէթիլենե եռաբաշխիչ de250-160	հատ	2	69.43	138.86
15	Պոլիէթիլենե եռաբաշխիչ de250-110	հատ	7	66.29	464.05
16	Պոլիէթիլենե եռաբաշխիչ de250-90	հատ	3	64.33	192.99
17	Պոլիէթիլենե անցում de160-90	հատ	1	10.40	10.40
18	Պոլիէթիլենե անցում de110-63	հատ	1	4.59	4.59
19	Պոլիէթիլենե անցում de90-63	հատ	2	3.97	7.93
20	Պոլիէթիլենե անցում de90-75	հատ	1	4.12	4.12
21	Պոլիէթիլենե անցում de75-63	հատ	1	3.39	3.39
22	Պողպատե պատյան խողովակ DN377x40,2մ, DN273x4-1,6մ, DN219x4-0,6մ DN114x4-0,6մ	կգ	69.1	0.68	47.24
23	Փականի տակդիր DN114x4 խողովակից և 0.15x0.15x0.004մ մետ. թիթեղից	կգ	60.0	0.64	38.24
24	Մետաղական մասերի երկշերտ յուղաներկում	մ2	3.0	0.74	2.22
	Անհատական տների ջրաչափական հանգույցներ 235 տան համար				
	Հողային աշխատանքներ				
1	Խրամուղու մշակում էքսկավատրով III կարգի գրունտներում կողալիցքով	մ³	1755.0	0.56	985.24
2	Խրամուղու մշակում ձեռքով III կարգի գրունտներում՝ կողալիցքով	մ³	450.0	2.18	982.25
3	Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում էքսկավատրով, բարձելով ա/մ և տեղափոխելով 5կմ կմ մեք.=0.210+0,5x1,9տ/մ³	մ³	675.0	3.92	2643.70

4	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով h=10սմ հաստությամբ	մ³	180.0	4.64	835.53
5	Խրամուղու ետլիցք ավազով	մ³	360.0	3.70	1331.73
6	Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից՝ տուփանումով	մ3	2205.0	0.28	618.76
7	Ջրաչափական հորի հատակի խճի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	մ³	23.00	7.52	172.90
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0.00	0.00
1	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների մոնտաժում de20,PN=1.0 ՄՊա,փորձարկումով	մ	3600.0	0.41	1471.22
2	Պոլիէթիլենե խամութային անցում de250/32	հատ	40	9.63	385.08
3	Պոլիէթիլենե անցում de32/20	հատ	40	1.91	76.27
4	Պոլիէթիլենե խամութային անցում de160/20	հատ	46	5.12	235.39
5	Պոլիէթիլենե խամութային անցում de110/20	հատ	197	3.03	596.07
6	Պոլիէթիլենե խամութային անցում de90/20	հատ	42	2.56	107.32
7	Պոլիէթիլենե խամութային անցում de75/20	հատ	115	2.45	281.82
8	Պոլիէթիլենե խամութային անցում de63/20	հատ	10	2.19	21.89
9	de 15մմ Ջրաչափական հանգույցի տեղադրում (բրոնզե փական,ֆիլտր,պողպատե կարճախողովակ երկկողմանե պարուրակով 3d և 1d, ստուգաչափված ջրաչափ և ջերմամեկուսիչ նյութ) առանց ջրաչափի արժեքի	հատ	450	8.55	3845.38
10	Ճկուն կցորդիչ DN15	հատ	900	1.98	1779.42
11	(PE) (St) միացում՝ HC20/15	հատ	450	8.16	3673.99
12	Ավազալցիմերային ջրաչափական հոր	հատ	450	43.41	19534.35
13	Պոլիէթիլենե (PE) de20 եռակցվող խողովակների լվացում,ախտահանում	կմ	3.600	65.43	235.56
	Ընդամենը				**100,170.46**
	Շահույթը 11%				**11,018.75**
	Ընդամենը շահույթով				**111,189.21**
	Չնախատեսված ծախսեր 4,0%				**4,447.57**
	Ընդամենը չնախատեսված ծախսերով				**115,636.77**
	ԱԱՀ 20%				**23,127.35**
	Ընդամենը ԱԱՀ-ով				**138,764.13**

* Կապալառուն աշխատանքները կատարում է՝ ՀՀ Արարատի Մարզ, Երևանի տարածք, Նոր Խարբերդ համայնք

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ 900011028314
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները
Ս. ՉԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գազկոմշին>> ՍՊԸ
ՀՀ ք.Երևան,Նոր-Նորքի 9-րդ զ-ծ 20/53
հեռ.՝ 095000027
էլ.փոստ gascomshin@gmail.com
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 00843968
Մ. ՄԻՍԱԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«21» օգոստոսի 2019թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափաբաժին 2- «Նոր Խարբերդ գյուղի 3, 4, 5, 6, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 փողոցների ջրագծերի վերակառուցում»

*Յուրաքանչյուր աշխատանքի համար համապատասխան նախագծային փաստաթղթերի

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
	Նոր Խարբերդ գյուղի 3, 4, 5, 6, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20 փողոցների ջրագծերի վերակառուցում, այդ թվում	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, նախագծային փաստաթղթերով սահմանված ժամկետներում	6 ամիս
1	Նախագծվող ջրագիծ - 1-13		
1.1	Հողային և ե/բ աշխատանքներ		
1.2	Տեխնոլոգիական աշխատանքներ		
2	Փականային հոր - 15 հատ		
2.1	Ե/բետոնե աշխատանքներ		
2.2	Տեխնոլոգիական աշխատանքներ		
3	Անհատական տների ջրաչափական հանգույցներ 235 տան համար		
3.1	Հողային աշխատանքներ		
3.2	Տեխնոլոգիական աշխատանքներ		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ վարչություն
Հ/Հ 900011028314
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

Ս. ՀԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գազկոմշին>> ՍՊԸ
ՀՀ ք.Երևան,Նոր-Նորքի 9-րդ գ-ծ 20/53
հեռ.՝ 095000027
Էլ.փոստ gascomshin@gmail.com
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1150090521800 0
ՀՎՀՀ 00843968

Մ. ՄԻՍԱԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«21» օգոստոսի 2019թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45231131/505	ջրամատակարարման խողովակաշարերի հետ կապված աշխատանքնե	80 000 000	80 000 000	80 000 000	80 000 000	80 000 000	80 000 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՓՆ վարչություն
Հ/Հ 900011028314
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

Ս. ՉԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գազկոմշին>> ՍՊԸ
ՀՀ ք.Երևան,Նոր-Նորքի 9-րդ զ-ծ 20/53
հեռ.՝ 095000027
էլ.փոստ gascomshin@gmail.com
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1150090521800 0
ՀՎՀՀ 00843968

Մ. ՄԻՍԱԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« 21 » օգոստոսի 2019թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«21» օգոստոսի 2019թ. կնքված
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ (Պատվիրատուի անունը)-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ (Կապալառուի անունը)-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2019թ. _____ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N _____ (պայմանագրի համարը) գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2019թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն